ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՋԱՏ ՀԱՄԲԱՐՅԱՆ

Արտագնացությունը հայ ժողովրդի սոցիալական կյանքի ուրույն երևույթներից մեկն էր։ Բնակչության մեծամասնության համար այն ծառայել է իբրև ապրուստի անհրաժեշտ, մյուսների համար՝ օժանդակ աղբյուր։ Արտագնացությունը գյուղացիներին կապել է երկրի առևտրաարդյունաբերական կենտրոնների հետ և նպաստել նրանց հասարակական-քաղաքական ու կուլտուրական զարգացմանը։ Ներկա հոդվածում ցույց են տրվում արտագնացության պատճառները, աճը և նշանակությունը XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին։

Արևելահայ գյուղում արտագնացությունը պայմանավորված էր մի շարք պատճառներով, որոնցից մեկը ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացումն էր։ Ներքաշվելով ռուսական կապիտալիզմի ոլորտի մեջ, Արևելյան Հայաստանի տնտեսության համարյա բոլոր ճյուղերը սկսեցին դուրս գալ բնամթերային վիճակից և ավելի ու ավելի ընդունել ապրանքային բնույթ։ Տնտեսական մրցակցությունը թափանցեց գյուղ և բնակչության մի մասին զրկեց կամ համարյա զրկեց արտադրության միջոցներից։ Գյուղացիության աղքատացած զանգվածները ստիպված եղան դիմել արտագնացության՝ որոնելով ապրուստի միջոցներ երկրամասում կամ կայսրության այլ շրջաններում։ Արևելահայ գյուղում արտագնացությունը պայմանավորված էր նաև բնակչության աճով։ Շուրջ 60—70 տարվա ընթացքում Երևանի նահանգի գյուղացիության թվաքանակը մեծացավ մոտ երկու անգամ, մինչդեռ հողատարածքը մնաց անփոփոխ։ Դրա հետևանքով գյուղացիների հողաբաժինները նշանակալի չափերով կրճատվեցին։ Այսպես. Նոր Բայազետի գավառի 45 գյուղերում 1886 թ. յուրաքանչյուր տնտեսություն ուներ միջին հաշվով 13 դեսյատին և յուրաքանչյուր անձ՝ 1,4 դեսյատին պիտանի հող, իսկ 1906 թ.՝ համապատասխանաբար 8,4 և 1 դեսյատին։ Կրճատվեցին նաև նրանց վարելահողերը. 1886 թ. յուրաքանչյուր տնտեսություն ուներ միջին հաշվով 8 դեսյատին և յուրաքանչյուր անձ՝ 0,9 դեսյատին վարելահող, իսկ 1906 թ. համապատասխանաբար՝ 5 և 0,6 դեսյատին[1]։ Համարյա այդպիսի տեմպերով գյուղացիների հողատարածքները նվազեցին նաև երկրի այլ շրջաններում։ XX դ. սկզբին գյուղացիներն արդեն գանգատվում էին, թե իրենց հողաբաժիններն այնքան են կրճատվել, որ յուրաքանչյուր շնչին հազիվ հասնում է կես դեսյատին[2], թե իրենց «սակավահողությունն այնքան լայն չափեր է ընդունել, որ հնարավորություն չունեն հողի մի մասին գոնե մի տարի հանգիստ տալու»[3]։

Արևելյան Հայաստանի գյուղացիության արտագնացությունը պայմանավորված էր նաև ցարական կառավարության հարկային քաղաքականության սաստկացումով։ Միայն 1900 թ. հունիսի 12-ի հողային օրենքով գյուղացիների ուղղակի տուրքերն աճեցին՝ Երևանի նահանգում՝ 48,5, իսկ Կարսի մարզում՝ 50 տոկոսով[4]։ Իշխանությունները գյուղացիների ուղղակի հարկերի հետ միասին բարձրացրին նաև անուղղակի հարկերն ու պարհակները։ Շա-

---

1 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1908 г.». с. 244.

2 Տե՛ս «Գյուղատնտես», 1910, № 22, էջ 346։

3 «Մշակ», 1910, № 62։

4 Տե՛ս «Մուրճ», 1901, № 5, էջ 273։

տերը, չկարողանալով վճարել այդ ծանր հարկերը, հարկադրված էին դիմել արտագնացության։

Արևելահայ գյուղում արտագնացությունն առաջ էր գալիս նաև վաշխառության հետևանքով։ XX դ. սկզբին դրամատերերն արդեն իրենց ճիրանների մեջ էին վերցրել՝ Արարատյան դաշտում բնակչության 95 տոկոսը, Զանգեզուրում՝ 80, Սիսիանում՝ 65, Կարսի մարզում՝ 75, Նոր Բայազետի գավառում՝ 95 տոկոսը[5]։ Գյուղացիության ճնշող մեծամասնությունը, չկարողանալով մարել վաշխառուական պարտքերը, հարկադրված էր դիմել տարագնացության։ Մի խոսքով արտագնացության գլխավոր և հիմնական պատճառը կարիքն ու աղքատությունն էր։

Սակայն մի շարք դեպքերում դատումների էին գնում նաև փոքրիշատի ապահովված գյուղացիները։ Նրանք մեկնում էին փող վաստակելու և իրենց տնտեսությունները ավելի բարեկարգելու կամ առևտրական գործունեություն ծավալելու նպատակներով։ Հաճախ նրանք բանում էին իրենց փոխադրական միջոցներով ու վաստակում ավելի մեծ գումար։

XIX դ. կեսերին Արևելյան Հայաստանում արտագնացների թիվը համարյա աննշան էր։ Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեի տվյալներով, 1860-կան թվականների սկզբներին արտագնացության էին մեկնել. Նոր Բայազետից 270 մարդ, Նախիջևանից՝ 150, Օրդուբադից՝ 220, Երևանից՝ 100 մարդ[6]։ Իսկ 1869 թ. երկրի չորս գավառներից (Նախիջևանի, Էջմիածնի, Նոր Բայազետի և Երևանի) գնացել էին շուրջ 2500 մարդ[7]։ Արտագնացների թիվը մեծ չէր նաև 1870-ական թվականներին։ 1880-ական թվականներին նրանց քանակը նկատելիորեն աճում է։ Պետական գյուղացիների տնտեսական դրությունն ուսումնասիրողները 1884—1886 թթ. արձանագրում էին, որ Նոր Բայազետի գավառի 31 գյուղերից արտագնաց աշխատանքի են մեկնել 6400 տղամարդուց 2230-ը (կամ 34, 84 տոկոսը) և նույն գավառի 77 գյուղերի 23791 տղամարդուց՝ 5065-ը (կամ ավելի քան 21 տոկոսը)[8]։ Շարուր-Դարալագյազի գավառում արտագնացության էր դիմում աշխատունակ տղամարդկանց 10 տոկոսը[9], Օրդուբադի գավառի Դանակերտ գյուղում՝ 4/5-ը[10] և այլն։

1892—1894 թթ. սովը նոր թափ հաղորդեց արտագնացությանը։ Միայն երեք գավառներից (Երևանի, Սուրմալուի և Նախիջևանի) արտագնացության դիմեցին՝ 1891 թ. 4546 մարդ, 1892 թ.՝ 4655, իսկ 1893 թ.՝ 5236 մարդ[11]։ Երկրի առանձին շրջաններում արտագնացների թիվն ավելի արագ աճեց։ Այդ նույն տարիներին, օրինակ, Նոր Բայազետի գավառից մեկնեցին՝ 1890 թ՝ 195 մարդ, 1891 թ.՝ 550, 1893 թ.՝ 1171, իսկ 1893 թ.՝ 1247 մարդ[12]։ Ս. Զավարյանը հաստատում էր, որ Երևանի նահանգում արդեն չկար գյուղ, որի աշխատունակ բնակչության ոչ պակաս, քան 10 տոկոսը չդիմեր տարագնացության։ Քիչ չէին այն գյուղերը, որտեղից մեկնում էր բնակչության 1/4-ը, 1/3-ը և նույնիսկ 1/2-ը[13]։ Ապա նա շարունակում էր, որ արդեն սկսել են դատումների մեկնել

---

5 «Кавказское сельское хозяйство», 1905, № 601, «Մշակ», 1909, № 152, 1910, № 150։

6 «Сборник статистических сведений о Кавказе», Тифлис, 1869, т. 1, отд. 3, с. 33, 49, 54, 59, 67.

7 ՀՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 133, ց. 1, գ. 891, թ. 18, 27, 35։

8 «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. I, Тифлис, 1885, с. 345, т. 4, ч. 2, с. 49.

9 Տե՛ս «Материалы...», т. 1, ч. 2, с. 140.

10 Տե՛ս «Материалы...», т. I, вып. 5, с. 635.

11 «Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях», исследования А. М. Аргутинского-Долгорукова, В. П. Бочкарева и Р. И. Даниловича, Тифлис, 1897, с. 604.

12 С. Заваров, Опыт исследования сельскохозяйственного хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899, с. 285.

13 Նույն տեղում, էջ 283։

այնպիսի վայրերից, ուր դրանք բնավ հարգի չեն եղել, «20 տարի սրանից առաջ գյոկչացիների համար ամոթ էր գնալ գործարան և կերակրվել օրվա աշխատանքով։ Բայց հիմա նրանք աշխատուժ են մատակարարում ոչ միայն Կետաբեկի, Սիմենսի գործարանին, այլև Օդեսայի ու Սևաստոպոլի արվարձաններին»[14]։

1890-ական թվականների վերջերին տարադնացությունն ավելի է աճում։ 1898 թ. նահանգապետը գրում էր. «Արտագնացային գրաղմունքը տարեցտարի ընդունում է ավելի ու ավելի նշանակալի չափեր։ 1898 թ. տարբեր քաղաքներ (Թիֆլիս, Բաքու, Բաթում և այլն) դատումների են մեկնել մինչև 20. 000 մարդ»[15]։ Սակայն արտագնացությունն անհամեմատ մեծացավ XX դարի սկզբին։ Այդ մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել հետևյալ աղյուսակից[16]։

Աղյուսակ Ի.

Գավառները	1901 թ.	1912 թ.	1913 թ.
Երևանի	տեղեկություն չկա	1959	2588
Էջմիածնի	«	4606	7861
Սուրմալուի	«	1721	1903
Նոր Բայազետի	5000 մարդ	10451	13198
Ալեքսանդրապոլի	3200 «	9573	14000
Շարուր-Դարալագյազի	2200 «	2305	2397
Նախիջևանի	3000 «	6418	6781
Ընդամենը	13400	36633*	48742**

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ Երևանի նահանգում 12 տարվա ընթացքում արտագնացների թիվը 13. 400-ից հասնում է 48. 742-ի։ Այն մեծ էր հատկապես սակավաճյուղ, աշխատանքի քիչ կարիք ունեցող լեռնային շրջաններում (Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի գավառներում) և համեմատաբար փոքր էր բազմաճյուղ, աշխատուժի առավել կարիք ունեցող հարթավայրային շրջաններում (Երևանի, Նախիջևանի, Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի գավառներում)։

Դարասկզբին արտագնացների թիվը աճեց նաև Կարսի մարզում։ 1907 թ. այն կազմում էր 2448 մարդ, 1909 թ.՝ 3243, իսկ 1910 թ.՝ 4081 մարդ[17]։ Նրանց մեծամասնությունը Կարսի օկրուգից էր. բավական է նշել, որ 1910 թ. այդ օկրուգից գնացել են 2035 մարդ, մինչդեռ Կաղզվանի օկրուգից՝ 884, Արդահանի օկրուգից 1006, Օլթիի օկրուգից՝ 156 մարդ[18]։

Ո՞ւր էին մեկնում արտագնացները։ Այդ հարցին որոշակի պատասխանում են 1912 թ. վերաբերող հետևյալ տվյալները[19]։

№ 2 աղյուսակից երևում է, որ արտագնացների մի մասը դիմում էր դատումների Արևելյան Հայաստանի ներսում։ Սովորաբար նրանք գյուղից մեկնում էին քաղաք կամ լեռնային ու նախալեռնային շրջաններից՝ դեպի ցածրադիր դաշտերը և վարձվում բամբակագործության, խաղողագործության և գյու-

14 Նույն տեղում, էջ 283։

15 «Обзор Эриванской губернии за 1908 г.», с. 8.

16 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1901 г.», с. 11, за 1912, с. 14, за 1913, с. 16.

* Հանրագումարը պետք է լինի 37033։

** Հանրագումարը պետք է լինի 48728։

17 «Обзор Карсской области за 1907 г.», с. 19, за 1909, с. 53, за 1910, с. 53.

18 «Обзор Карсской области, 1910 г.», с. 53.

19 «Обзор Эриванской губернии за 1912 г.», с. 14.

ղատնտեսության այլ բնագավառներում։ 1909 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «Բամբակի շրջանները սպասարկվում են աշխատող ձեռքերով Երևանի, Էջմիածնի ու Նոր Բայազետի գավառների լեռնային գոտիներից։ Աշնանը, հենց որ ավարտվում են գյուղատնտեսական աշխատանքները, այդ վայրերից բնակիչներն ամբողջ խմբերով ուղղվում են դեպի Երևանի նահանգի ցածրադիր շրջանները, որ աշխատեն հատկապես բամբակի պլանտացիաներում և մնում են մինչև բերքահավաքի ավարտումը»[20]։

Աղյուսակ 2

Գավառները	Այն գյուղերի թիվը, որտեղից մեկնել են	Մեկնողների թվաքանակը (մարդ)			Տարեկան վաստակը (ռուբլիներով)
		Երևանի նահանգի սահմաններում	Երևանի նահանգի սահմանից դուրս	արտասահման	
Երևանի	79	1758	195	6	36230
Էջմիածնի	120	3121	1157	328	373565
Սուրմալուի	126	820	731	150	151410
Նոր Բայազետի	132	3049	7361	41	873780
Ալեքսանդրապոլի	148	3821	5237	515	832460
Շարուր-Դարալագեզի	96	554	1750	1	88950
Նախիջևանի	127	1424	3917	1077	350285
Ընդամենը	828	14547	20368	2118	2 706680

Սակայն Արևելյան Հայաստանի աշխատուժի վաճառքի շուկան կարող էր կլանել ընչազուրկների միայն փոքր մասը։ Այդ պատճառով էլ արտագնացների մեծամասնությունը հարկադրված էր դատումների մեկնել նրա սահմաններից դուրս։ Նրանք գնում էին ամենից առաջ Անդրկովկասի առևտրա-արդյունաբերական կենտրոնները, առավելապես Բաքու, Թիֆլիս և Բաթում։ Գյուղագիր Սողոմոն Մելիք-Շահնազարյանը գրում էր. «... Բաքուն դեռևս չտեսնողները, նորա ծարավով տոչորվողները գնացին և դեռ շարունակ շաբաթ չի անցնում, որ Բաքու տանող ճանապարհի վրա սևին չտա պանդուխտ գնացողների խումբը կռունկների նման, որոնք չվում են ուրախությամբ դեպի տաք երկրներ. իսկ տեսնողները գյուղում երկար չմնացին, չկարողացան գյուղական կյանքը տանել, պանդուխտի պարկերը շալակներն առնելով՝ շտապեցին դեպի Բաքու...»[21]։ Արտագնացները մեկնում էին նաև Կովկասից հեռու՝ դեպի Միջին Ասիա, Սիբիր, Հեռավոր Արևելք, եվրոպական Ռուսաստան, անգամ արտասահման։ 1913 թ. Պ. Պետրովիչը գրում էր, որ Երևանի նահանգից «գնում են Բաքու, Տուապսե (նավահանգստի կառուցման վրա աշխատելու), Քութայիսի նահանգի մարգանեցի հանքերը, Թուրքեստան, Ամուր, մեկնում են սայլերով Կախեթ, Եվլախի ճանապարհի վրա բանելու և նույնիսկ Պարսկաստան... ընդհուպ մինչև Ուրմիա»։ Ապա շարունակում էր, որ հայ տարագնացները մեկնում են նաև Ամերիկա, հաստատվելով «Խաղաղ օվկիանոսի ափերին, Լոս Անջելոս քաղաքում ու նրա շրջակայքում»[22]։ Համարյա նույն ուղղություններով էին շարժվում նաև Կարսի մարզի արտագնացները։ 1905 թ. նահանգապետը գրում էր, որ մարզի «հիմնական բնակիչների մի մասը գնում է դատումների Անդրկովկասի առևտրական ու արդյունաբերական կենտրոնները, Ռուսաստանի ներքին նահանգները և նույնիսկ Պարսկաստան։ Հույները, որպես հիանալի քարտաշներ, իրենց համար օգտավետ զբաղմունք են գտնում երկաթուղային շինարարությունում և պետական կառույցներում, իսկ մյուս տեղացի-

20 «Труды съезда хлопкоробов в гор. Тифлисе 1—6 ноября 1912 г.», т. II, ч. II, Тифлис, 1914, с. 76.

21 «Հայ գյուղագիրներ», Երևան, 1950, էջ 483։

22 «Итоги урожая и состояние скотоводства в Закавказье в 1913 г.», Тифлис, 1914, с. 22—23.

ները, ինչպես օրինակ, հայերեն ու թուրքերը, մեկնում են դատումների, բացառիկ դեպքերում, որպես հասարակ սեպագործ բանվորներ։ Ռուս վերաբնակիչները— աղանդավորները— գերադասում են զբաղվել իրենց իսկական արհեստագործությամբ— սայլապանությամբ, որի համար նրանք ունեն բավականաչափ ձիեր ու սայլեր»[23]։

Արտագնացների աշխատավարձի մասին մենք չունենք բավարար տվյալներ։ Դատելով վերջին աղյուսակի տեղեկություններով, պետք է նշել, որ նյանցից յուրաքանչյուրը տարեկան ստանում էր մոտ 80 ռուբ.։ Սակայն դա միջին թիվ է և որպես այդպիսին չի արտահայտում իսկական պատկերը։ Ճշմարտությունն այն է, որ տարագնացները մեկնում էին սովորաբար այնտեղ, ուր բարձր էր աշխատավարձը և երկրի տարբեր շրջաններում, տնտեսության տարբեր ճյուղերում, տարբեր պայմաններում ստանում էին տարբեր, բայց իրենց կատարածից, իբրև կանոն, ցածր աշխատավարձ։

Օտարության մեջ տարագնացները ենթարկվում էին բազմաթիվ զրկանքների ու շարչարանքների։ Նրանք դժվարությամբ էին տեղավորվում աշխատանքի, իսկ տեղավորվելիս դաժանորեն շահագործվում էին տերերի կողմից, կորցնում նույնիսկ առողջությունը։ Այդպիսիները տուն վերադառնալիս ոչ թե թեթևացնում էին ընտանիքի վիճակը, այլ ավելի էին վատթարացնում այն։ Դեռ 1860-ական թվականներին Մ. Նալբանդյանը, խոսելով հայ տարագիրների մասին, գրում էր. «Աղքատությունը ստիպում է նորան (գյուղացուն— Ա. Հ.) թողուլ յուր տունը, յուր ընտանիքը, յուր ամուսինը, յուր զավակները և գնալ Պոլիս կամ այլ քաղաք, աղքատությունից ազատվելու համար։ Բայց այդ տեղում ևս նորան հանդեպ է դուրս գալիս էապես նույն աղքատությունը»[24]։ Նա գրում էր, որ թեև քաղաքում տարագնացը փոքր ինչ ավելի է ստանում, բայց չի ազատվում խեղճությունից։ Օտարության մեջ նա կատարում է դժոխային աշխատանք, օրերն անց է կացնում կեղտոտ իջևաններում ու հրապարակներում, երեկոյան ընկնում ուժասպառ, իսկ լուսաբացին սպասում են նրան նույն եգիպտական ծառայությունները։ «Չկա այն ընտանեկան մխիթարությունը, ամուսնու և զավակների մտերմական, գողտրիկ և անմեղ հայացքը, որ առանց ձայնի, առանց խոսելու, կարող են ամոքել ճակատագրի դառնությունը...»[25]։ Հրապարակախոսն այնուհետև եզրափակում է. «Եվ այսպես, իբրև գրաստ, իբրև մեքենա ծառայելով արտասվելի օտարության մեջ տասն-քսան տարի, կամ մեռանում է այնտեղ, թողնելով յուր ընտանիքը ծայրացյալ թշվառության մեջ, կամ վերադառնում է դեպի յուր երկիրը։ Վերադառնում է... բայց ոչ այնպես առույգ և զվարթ, ինչպես դուրս էր եկել այնտեղից, այլ հասակն առած, ուժաթափ և թոշնած։ Վերադառնում է յուր տունը... Բայց ի՞նչ եղավ արդյոք այն լքյալ տունի և ընտանիքի վիճակը նորա բացակայության ժամանակ։ Վերադառնում է յուր տունը, երբ կորուսել էր աշխատելու ընդունակությունը և հարմարությունը։ Ուրեմն, վերադառնում է նա միմիայն յուր ներկայությամբ, յուր աղքատ և կարոտ ընտանյաց թիվը հավելացնելու համար»[26]։

Հատկանշական է, որ տարագնացի այդ ճակատագիրը չէր փոխվել նաև XIX դ. վերջին և XX դ. սկզբին։ 1900 թ. «Մշակի» թղթակիցը գրում էր, որ Ղազախի գավառից շատերն են գնում վաստակների՝ երկրամասի արդյունաբերական կենտրոնները, հատկապես Բաքու։ Նրանց մի մասը գնում է խաթարված տնտեսությունը վերականգնելու հույսով, մյուսը՝ պետական հարկերը վճարելու, երրորդը՝ վաշխառուների ձեռքերից ազատվելու համար. «Բայց հասնո՞ւմ են արդյոք այդ խեղճերը իրենց փայփայած հույսերին, քաղցր անուրջներին. պատասխանը քիչ բացառությամբ հազիվ թե դրական

23 «Обзор Карсской области за 1905 г.», с. 16.

24 Մ ի ք ա յ ե լ Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1940, էջ 68։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում։

լինի։ Այն գաղափարին, որ սնվել է իր ծննդավայրի լեռնային մութուր օդով և աղբյուրների վճիտ ջրերով, որտեղ գարու ցամաք հացն էլ շատ համեղ պատառ է թվացել նրան՝ այստեղ շուտ են ենթարկվում անծանոթ երկրի դառն պայմաններին. գործարանների խեղդող օդը, «խարշլնյաններում» ստացած պատառողջ սնունդը և մեծ քաղաքներին հատուկ մաքրությունից զուրկ կյանքը հալ ու մաշ են անում խեղճի երկաթյա կազմվածքը... Եվ ահա շանցած մի քանի տարի՝ վերադառնում է նա տուն դեղնած, նիհարած և դանազան վարակիչ հիվանդություններով ծանրարեռնված. ահա նրա աշխատանքն այդ քաղաքներից, ահա նրա բերածը քաղցած ծնողների և մերկ զավակների համար։ Եթե պատահում է, որ մի քանի մանեթ էլ բերում է, այդ էլ, ինչպես գյուղացիք են ասում, «յորղանի տակին է ուտում»[27]։ Նույն պարբերականի թղթակիցը 1910 թ. Խարկովից հաղորդում էր. «Ոչ մի տարի այնպես չէր լցվել տեղս հայ պանդուխտներով, ինչպես այս տարի։ Յուրաքանչյուր օր ավելանում են ամեն կողմից... աղքատ հայեր»։ Բայց երկար ժամանակ գործ չեն գտնում, շատերը համաձայնվում են ծառայել ամսական 10 ռուբլով, «որպեսզի գտնե 2—3 ամիս ծառայելուց հետո մի ճանապարհածախս ունենան հայրենիք վերադառնալու, բայց դժբախտաբար հենց այդ աշխատանքը, ծառայությունն է, որ չկա։ Ուստի ցանկալի է, որ այլևս չշարունակվեր պանդուխտների ավելացումը Ռուսաստանի այս խորքում, ուր մարդու կյանքն է մաշվում»[28]։

Չնայած այդ ամենին, արտագնացությունը նպաստում էր գյուղացիների հասարակական, քաղաքական ու կուլտուրական զարդացմանը։ Նրանք լինում էին երկրի տարբեր ջրջաններում, արդյունաբերական կենտրոններում, շփվում էին պրոլետարիատի առաջավոր ու գիտակից խավերի հետ, սովորում էին նրանց պայքարի եղանակները և, տուն վերադառնալով, տարածում այդ ամենը իրենց համագյուղացիների մեջ։

Արտագնացների մի մասը վերադառնում էր ետ՝ իրենց հարազատ վայրերը, բայց մյուս մասը մնում էր առևտրա-արդյունաբերական կենտրոններում և այդպիսով համալրում պրոլետարիատի շարքերը, սկսած հարևան Վրաստանից ու Ադրբեջանից, վերջացրած Ռուսաստանի հեռավոր վայրերով։

ОБ ОТХОДНИЧЕСТВЕ КРЕСТЬЯНСТВА ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

АЗАТ АМБАРЯН

Резюме

Во второй половине XIX—начале XX вв. в результате развития капиталистических отношений в Восточной Армении крестьяне экономически разоряются. Их разорение усиливается также налоговым гнетом царизма, периодически повторяющимися неурожаями и другими факторами. Чтобы прокормить себя и свои семьи, крестьяне вынуждены были уходить на заработки как внутри Восточной Армении, так и за ее пределы. Часть их возвращалась обратно на родные места, другая же пополняла ряды формирующегося пролетариата главным образом в промышленных центрах Закавказья.

27 «Մշակ», 1900, № 25։

28 «Մշակ», 1910, № 108։